Համաքաղաքային քննարկումների սցենարները

Բովանդակություն

Համաքաղաքային քննարկումների սցենարները 1

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Գործարար համագործակցության խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում 2

Սցենար 1. Հայ-թուրքական գործարար հարաբերությունների ներկա վիճակը

Սցենար 2. Գործարար կապերի խզում, նոր հնարավորությունների փնտրտուք

Սցենար 3. Սահմանները բացվում են, տնտեսությունը՝ ծաղկում

Սցենար 4. Սահմանը բաց՝ տնտեսությունն անփոփոխ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Իրավական խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում 5

Սցենար 1. Հայ-թուրքական իրավական հարաբերությունների ներկա վիճակը

Սցենար 2. Այլընտրանքային ուղիների փնտրտուքում

Սցենար 3. Քաղաքական օրհնություն

Սցենար 4. Բաց սահման, փակ հնարավորություններ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրները 9

Սցենար 1. Բաց սահմաններ՝ քաղաքական նոր լծակներ

Սցենար 2. Նոր ստատուս քվո՝ վերադարձ հնին

Սցենար 3. Փոքր համաձայնություններ, դանդաղ առաջընթաց

Սցենար 4. Կապերի խզում, նոր հնարավորությունների փնտրտուք

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Գործարար համագործակցության խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում

Համաքաղաքային քննարկում. Երևան
11.11.2010

Սցենար 1. Հայ-թուրքական գործարար հարաբերությունների ներկա վիճակը

Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը փակ է: Երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատված չեն: Արդյունքում, հայաստանյան և թուրքական իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև որևէ պայմանագրի կատարման իրավական ապահովումը սահմանափակվում է բացառապես կողմերի բարի կամքով և որոշ չափով նաև քաղաքական կամքով:

Հայաստանն ու Թուրքիան միացել են բազմաթիվ միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի: Այդուհանդերձ, այս համաձայնագրերը մեծ մասամբ պարտադրում են միայն քաղաքական հանձնառություններ և հազիվ թե կարող են կիրառվել պայմանագրային հարաբերությունների իրավական ապահովման նպատակով: Միջազգային կարգավորման մի շարք այլ գործիքներ, որոնք իրավական պարտավորություններ են սահմանում, երկու երկրների միջև իրավական հարաբերությունների առումով հաճախ նույնպես կիրառելի չեն: Ասվածը ճիշտ է մասնավորապես ԱՄԿ գործիքների պարագայում: Այսպես, Թուրքիան ԱՄԿ համաձայնագրի հանդեպ վերապահումներ է արել ԱՄԿ կանոնները Հայաստանի նկատմամբ պարտադիր կիրառելու հարցում, վերջինիս ԱՄԿ անդամակցության շեմին: Առանձին երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ժառանգություն են մնացել նախկին ԽՍՀՄ-ից, այդ թվում՝ սահմանային գետերի ջրային ռեսուրսների և պատնեշների կառավարման վերաբերյալ:

Միաժամանակ, Հայաստանում և Թուրքիայում բիզնես գործընկերները նախորդ տասնամյակում մշակել և ներդրել են այլընտրանքային մեխանիզմներ: Այսպես, շատ համատեղ գործարքներ կնքվում են այսպես կոչված «ջենտլմենական համաձայնության» վրա՝ հիմնվելով վստահության և երկարատև հարաբերությունների վրա: Երբեմն կայացած գործարար հարաբերություններն այնքան ամուր են, որ մեկ հեռախոսազանգով բազմամիլիոն գործարքներ են կնքվում: Այդուհանդերձ, նման պրակտիկան հիմնականում վերաբերվում է առևտրային գործարքներին և որևէ կերպ չի հեշտացնում մաքսային ընթացակարգերը: Ուղղակի հարաբերությունների բացակայության պարագայում ծառայությունների ոլորտում կոնտրակտները մնում են խիստ սահմանափակ (օրինակ՝ հեռահաղորդակցության ոլորտում):

Հայաստանի և Թուրքիայի բիզնես գործընկերների համար իրավական ապահովման արդյունավետ մեխանիզմներն, ըստ էության, բացակայում են: Փոխարենը, այս բացը ինչ-որ կերպ լրացնում են սոցիալական նորմերն ու գործարար պրակտիկան: Արդյունքում, գործարքների թիվը մնում է փոքր, դեռևս հաստատված կապեր չունեցող գործարարների համար գործարքների հնարավորությունները մնում են սահմանափակ, իսկ նոր գործարար հարաբերություններում առկա ռիսկերը՝ բարձր: Այնուամենայնիվ Հայաստանի և Թուրքիայի միջև ֆինանսական գործարքները՝ կանխիկ վճարումներից մինչև բանկային և օֆշորային փոխանցումներն իրականացվում են անխաթար՝ տարբեր վճարային համակարգերի միջոցով:

Գործարար պայմանագրերի բողոքարկման դեպքերի փորձը տարբեր է: Խոշոր գործարքների դեպքում հղում է կատարվում Նյու Յորքի Արբիտրաժի կոնվենցիային: Առանձին դեպքերում Հայաստանի և Թուրքիայի գործարարների միջև կոնֆլիկտները լուծվել են Նյու Յորքի արբիտրաժի միջոցով: Այդուհանդերձ, նման գործընթացի գինը բարձր է և ոչ միշտ

ընդունելի: Առանձին դեպքերում հայ գործընկերների հետ վեճերը թուրք գործարարների նախաձեռնությամբ լուծվել են հենց Հայաստանի դատարաններում:

Սցենար 2. Գործարար կապերի խզում, նոր հնարավորությունների փնտրտուք

Քաղաքական իրավիճակի կտրուկ շիկացման արդյունքում Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններն ամբողջապես սառեցվում են: Թուրքիան որոշում է Հայաստանի պարագայում շեղվել իր կողմից հայտարարված ուղղուց՝ «արագ և ապահով տրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծում, որը կավելացնի երկրի մրցակցային ներուժը և կարագացնի ինտեգրումը ԵՄ և հարևան երկրների տնտեսություններին», և դադարեցնում է որևէ համագործակցությունը Հայաստանի հետ: Արդյունքում դադարում է համագործակցությունը նաև օդային փոխադրումների ոլորտում: Վրաստանը նույնպես միանում է այս քաղաքականությանը և դադարեցնում Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդությունը: Արդյունքում դադարում է Վրաստանի տարածքով Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային կապը, ինչպես նաև օպտիկամանրաթելային մալուխի միջոցով տվյալների փոխանցումը:

Այս քայլերն արժանանում են ԵՄ-ն քննադատությանը: Վերջինիս կողմից Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության բանակցություններում նոր նախապայմաններ են առաջ քաշվում՝ վերականգնել ենթակառուցվածքների միջև թեկուզ չնչին, սակայն կայացած գործակցությունը:

Նման իրավիճակը ստիպում է Հայաստանին ուղղել ներդրումները դեպի Հյուսիս-Հարավ ենթակառուցվածքների զարգացմանը: Հայաստանն ամբողջապես ինտեգրվում է Իրանի և Վրաստանի տրանսպորտային և հեռահաղորդակցության ցանցերին: Հայաստանը միանում է Սև ծովի հատակով SS մալուխի անցկացման ծրագրին և ներդրումներ կատարում Հայաստան-Իրան ավտոմայրուղու կառուցման ծրագրում: Հայաստանը հայտարարում է իր քաղաքական մոտեցումը. «Թեկուզ թանկ, սակայն՝ ապահով»: Քաղաքական նման փոփոխությունները ավելի են կոշտացնում Հայաստանի արտաքին քաղաքականությունը:

Արդյունքում ձևավորվում է նոր ստատուս քվո Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծով-ԵՄ և ԵՄ-Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ենթակառուցվածքային համակարգերով, որոնց միջև Վրաստանն այլևս չի ծառայում որպես հաղորդակցության խաչմերուկ: Այս երկու անկախ ենթակառուցվածքները, պարզապես, գործում են զուգահեռաբար և իրարից անկախ՝ թեպետ հատում են մեկը մյուսին:

Սցենար 3. Սահմանները բացվում են, տնտեսությունը՝ ծաղկում

Հայ-թուրքական սահմանի բացումը և երկխոսության սկսումը հանգեցնում է երկու պետությունների հարաբերությունների բարելավմանը: Թուրքիան, ինչպես նաև Հայաստանը գիտակցում են փոխադարձ վստահության ստեղծման կարևորությունը, և փորձում են պահպանել գործնական մթնոլորտը:

Նույնիսկ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում, տնտեսվարողները բաց սահմանները ընկալում են որպես լուրջ հնարավորություն, նախադրյալներ են ստեղծվում մեծածավալ ներդրումների ու ծրագրերի իրականացման համար: Մասնավորապես, ռուսական երկաթուղային տրանսպորտի և էներգետիկ ոլորտները ներկայացնող ընկերությունները ներդրումներ կատարելու պատրաստակամություն են հանդես բերում: Նշանակալի հեռանկարներ են բացվում նոր ԱԷԿ-ի, Հայաստան-Իրան երկաթգծի, Հրազդանի ՋԷԿ-ի նոր բլոկի կառուցման համար:

Հայաստանը, փոխկապակցելով իր շահերը այլ գերտությունների շահերի հետ, կարողանում է մասնակիորեն ստանձնել թելադրող-նախաձեռնողի դեր ու ի վիճակի է լինում հասնել տնտեսական շահերի առաջմղմանը՝ առանց քաղաքական առանցքի թուլացման:

Նախադրյալներ են ստեղծվում նաև տնտեսության ներքին կառուցվածքի փոփոխության ու առողջ մրցակցության ստեղծման համար՝ պայմանավորված տարածաշրջանում միջազգային կորպորացիաների ներդրումներ իրականացնելու ու ներկայացուցչություններ բացելու հետ:

Հայաստանը դառնում է ԱՊՀ ամենաարագ զարգացող տնտեսությունը:

Սցենար 4. Սահմանը բաց՝ տնտեսությունն անփոփոխ

Հայաստանն ու Թուրքիան փորձում են փոխադարձ մեղադրանքներից զերծ մնալ և բարելավել հարաբերությունները՝ հայտարարելով խաղաղության հաստատման ու փոխադարձ վստահության կարևորությունն ու բարեկեցիկ ապագայի կերտումը:

Միջազգային հանրությունը Հայաստանին ու Թուրքիային թողնում են միայնակ ու դեմհանդիման՝ «երկխոսություն իրականացնելու»: Այս պայմաններում հայկական դիվանագիտությունը ոչինչ չի կարողանում անել, մնում է հայ-թուրքական վստահության հարգման խոստումի պատանդը: Թուրքիան նախաձեռնում է սահմանի վերջնական գծման ու հաստատման գործընթացը, որն ըստ նրա «վերջ կդնի լարվածությանը, տարամեկնաբանությանն ու անիմաստ հակամարտություններին, հիմք կդառնա երկու ազգերի միջև հարատև խաղաղության հաստատման համար»:

Հաղորդակցության և էներգետիկ ոլորտի ենթահանձնաժողովի գործունեությունն, ըստ էության, պայմանավորվում է ավելի շուտ թուրք-ռուսական տնտեսական շահերից ելնելով, քանի որ հայաստանյան ենթակառուցվածքներում գերակայում է ռուսական կապիտալը: Առանձին մեծ ծրագրերի իրականացման հնարավորություն է ստեղծվում, սակայն Թուրքիան հմտորեն կարողանում է սպառնալ դրանց չիրականացմամբ՝ տնտեսական ոլորտում ցանկացած համագործակցություն պայմանավորելով Հայաստանի կողմից որոշակի քաղաքական զիջումներով: Քայլ առ քայլ Հայաստանը սկսում է քաղաքական շահերը զիջել՝ ի նպաստ տնտեսական օգուտների: Ու թեպետ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման պաշտոնական գործընթացում ԼՂ հակամարտության հարցը չի շոշափվում, այնուամենայնիվ Թուրքիան կարողանում է, տնտեսական ծրագրերի իրականացման լծակը կիրառելով, քիչ-քիչ միջամտել նաև այդ գործընթացին՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելու միջոցով: Ուրվագծվում են ռուս-թուրքական տարածաշրջանային համագործակցության հեռանկարները՝ Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմի թուրքական նախաձեռնության շրջանակներում:

Տնտեսական մեծ ներդրումները նոր շունչ են հաղորդում Հայաստանի զարգացմանը, վերանում է Վրաստանի ճանապարհային կախվածությունը, և թեպետ մեկը մյուսի հետևից սկսում են տնտեսական ծրագրերի իրագործումը, Հայաստանի տնտեսության վրա ազդեցությունը մնում է չնչին ու հիմնական գործող անձինք դառնում են թուրքական և ռուսական գործարար շրջանակները:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Իրավական խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում

Համաքաղաքային քննարկում, Գյումրի

23.11.10

Սցենար 1. Հայ-թուրքական իրավական հարաբերությունների ներկա վիճակը

Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը փակ է: Երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատված չեն: Արդյունքում, հայաստանյան և թուրքական իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև որևէ պայմանագրի կատարման իրավական ապահովումը սահմանափակվում է բացառապես կողմերի բարի կամքով և որոշ չափով նաև քաղաքական կամքով:

Հայաստանն ու Թուրքիան միացել են բազմաթիվ միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի: Այդուհանդերձ, այս համաձայնագրերը մեծ մասամբ պարտադրում են միայն քաղաքական հանձնառություններ և հազիվ թե կարող են կիրառվել պայմանագրային հարաբերությունների իրավական ապահովման նպատակով: Միջազգային կարգավորման մի շարք այլ գործիքներ, որոնք իրավական պարտավորություններ են սահմանում, երկու երկրների միջև իրավական հարաբերությունների առումով հաճախ նույնպես կիրառելի չեն: Ասվածը ճիշտ է մասնավորապես ԱՄԿ գործիքների պարագայում: Այսպես, Թուրքիան ԱՄԿ համաձայնագրի հանդեպ վերապահումներ է արել ԱՄԿ կանոնները Հայաստանի նկատմամբ պարտադիր կիրառելու հարցում, վերջինիս ԱՄԿ անդամակցության շեմին: Առանձին երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ժառանգություն են մնացել նախկին ԽՍՀՄ-ից, այդ թվում՝ սահմանային գետերի ջրային ռեսուրսների և պատնեշների կառավարման վերաբերյալ:

Միաժամանակ, Հայաստանում և Թուրքիայում բիզնես գործընկերները նախորդ տասնամյակում մշակել և ներդրել են այլընտրանքային մեխանիզմներ: Այսպես, շատ համատեղ գործարքներ կնքվում են այսպես կոչված «ջենտլմենական համաձայնության» վրա և դրանց մեծ մասը հիմնվում են վստահության և երկարատև հարաբերությունների վրա: Երբեմն կայացած գործարար հարաբերություններն այնքան ամուր են, որ մեկ հեռախոսազանգով բազմամիլիոն գործարքներ են կնքվում: Այդուհանդերձ, նման պրակտիկան հիմնականում վերաբերվում է առևտրային գործարքներին և որևէ կերպ չի հեշտացնում մաքսային ընթացակարգերը: Ուղղակի հարաբերությունների բացակայության պարագայում ծառայությունների ոլորտում կոնտրակտները մնում են խիստ սահմանափակ (օրինակ՝ հեռահաղորդակցության ոլորտում):

Հայաստանի և Թուրքիայի բիզնես գործընկերների համար իրավական ապահովման արդյունավետ մեխանիզմներն, ըստ էության, բացակայում են: Փոխարենը, այս բացը ինչ-որ կերպ լրացնում են սոցիալական նորմերն ու գործարար պրակտիկան: Արդյունքում, գործարքների թիվը մնում է փոքր, դեռևս հաստատված կապեր չունեցող գործարարների համար գործարքների հնարավորությունները մնում են սահմանափակ, իսկ նոր գործարար հարաբերություններում առկա ռիսկերը՝ բարձր: Այնուամենայնիվ Հայաստանի և Թուրքիայի միջև ֆինանսական գործարքները՝ կանխիկ վճարումներից մինչև բանկային և օֆշորային փոխանցումներն իրականացվում են անխաթար՝ տարբեր վճարային համակարգերի միջոցով:

Գործարար պայմանագրերի բողոքարկման դեպքերի փորձը տարբեր է: Խոշոր գործարքների դեպքում հղում է կատարվում Նյու Յորքի Արբիտրաժի կոնվենցիային: Առանձին դեպքերում Հայաստանի և Թուրքիայի գործարարների միջև կոնֆլիկտները լուծվել են Նյու Յորքի արբիտրաժի միջոցով: Այդուհանդերձ, նման գործընթացի գինը բարձր է և ոչ միշտ

ընդունելի: Առանձին դեպքերում հայ գործընկերների հետ վեճերը թուրք գործարարների նախաձեռնությամբ լուծվել են հենց Հայաստանի դատարաններում:

Սցենար 2. Այլընտրանքային ուղիների փնտրտուքում

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում էական առաջընթաց չկա. փակ է ցամաքային սահմանը և չկան դիվանագիտական հարաբերություններ:

Իրավական հարաբերությունների ոլորտում հիմնական խնդիրը մնում է երկու երկրների միջև մաքսային կարգավորման ընթացակարգերի բարդությունը: Այդուհանդերձ, երկու երկրների գործարար համայնքները շարունակում են քաղաքական իրավիճակով պայմանավորված անորոշությունները կրճատելու և բիզնես ռիսկերը մեղմելու լուծումներ փնտրել: Առկա գործընկերային հարաբերություններն ու բիզնես ասոցիացիաները միատեղում են իրենց ջանքերը՝ շրջանցիկ ուղիներ գտնելու և դրանք ինստիտուցիոնալ դարձնելու ուղղությամբ: Շատ գործընկերներ ելք են փնտրում՝ իրենց գործարքներն իրավականորեն ձևակերպելով Վրաստանում գրանցված միջնորդ կազմակերպությունների կամ դրանց մասնաճյուղերի միջոցով: Վրաստանում և տարբեր օֆշորային գոտիներում ստեղծվել է հայ-թուրքական ընկերությունների ցանց, որը հեշտացնում է հայաստանյան և թուրքական ընկերությունների միջև գործարար հարաբերությունների հաստատումը: Ձևավորվում են հայ-թուրքական վճարային համակարգը, համատեղ բանկը, ապահովագրական ընկերությունը, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն մատուցող մի շարք ընկերություններ:

Թեև բիզնես ռիսկերը փոխկապակցված են քաղաքական ռիսկերին և զգայուն են քաղաքական իրավիճակի աննշան փոփոխությունների հանդեպ, այնուամենայնիվ, բոլոր անդրսահմանային գործարքներն ապահովագրվում են քաղաքական ռիսկերից:

Բիզնես ընկերակցությունները որոշակիորեն ինստիտուցիոնալացնում են հայաստանյան և թուրքական բիզնեսների միջև ձևավորված սոցիալական նորմերը և կրճատում են ռիսկերը: Հայաստանյան և թուրքական ընկերությունները, որոնք համատեղ բիզնես գործարքների երկարատև փորձ ունեն, պատրաստակամորեն կիսում են իրենց գիտելիքները և գործարար կապերով աջակցում նոր նախաձեռնություններին: Ապահովագրական հայտնի ընկերությունների հետ բանակցություններ են ընթանում՝ ապահովագրելու համար այն գործարքները, որոնց կատարումը իրավականորեն հնարավոր չէ պարտադրել:

Արդյունքում ձևավորվում է նոր ինքնաբավ բիզնես՝ գործարար համակարգ, որը հնարավոր է դարձնում անդրսահմանային գործարքները նոր գործընկերների միջև՝ դրանով ընդլայնելով առկա շուկան: Մաքսային ձևակերպումների ծախքերի ու առկա այլ խնդիրների շրջանցիկ լուծումների ֆինանսավորումը կատարվում է անդամավճարների հաշվին, որոնք թեև մեծացնում են գործարքների գինը, սակայն որոշակիորեն կրճատում են ռիսկերը:

Թեև Նյու Յորքի Արբիտրաժը կոնֆլիկտների լուծման լայնորեն ընդունված միջոց է մնում, Վրաստանի իշխանություններն այդ երկրի կարգավորիչ դաշտն ու Վրաստանի դատարաններն առաջարկում են որպես պայմանագրերի իրավական ապահովման այլընտրանքային միջոց: Բազմաթիվ բիզնես գործընկերներ այս առաջարկն ընդունում են և համարում են այն պայմանագրային պարտավորությունների կատարման իրավական ապահովման արդյունավետ այլընտրանք:

Սցենար 3. Քաղաքական օրհնություն

Թեպետ Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը մնում է փակ, երկու երկրների իշխանությունները, որպես հարաբերությունների կարգավորման կարևոր քայլ,

քաղաքական որոշում են կայացնում ապահովել այնպիսի իրավական և տնտեսական միջավայր, որը հնարավոր կդարձնի հայաստանյան և թուրքական ընկերությունների միջև անմիջական պայմանագրային հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը: Կառավարությունները ստորագրում են նոր արձանագրություն՝ թվելով այն իրավական փաստաթղթերը, պայմանագրերի իրավական ապահովման համար անհրաժեշտ ակտերը, որոնք հնարավոր են դարձնելու երկկողմ գործարքների կնքումն ու իրականացումը:

Հայաստանի և Թուրքիայի իշխանությունները և միջնորդները համարում են, որ ավելի ամուր տնտեսական կապերն ու շահերը կխթանեն հարաբերությունների կարգավորման համար արդյունավետ միջավայրն ու կնվազեցնեն երրորդ կողմի շահերով պայմանավորված քաղաքական ռիսկերը: Արդյունքում, հայաստանյան և թուրքական ընկերությունները «քաղաքական կանաչ լույս» են ստանում ենթակառուցվածքային ծրագրեր իրականացնելու համար:

Հարևան երկրների էլեկտրական ցանցերը միակցվում են, իսկ էլեկտրաէներգիա արտադրողները, փոխադրողներն ու ցանցերի օպերատորները գործարար համաձայնագրեր են ստորագրում Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջնորդությամբ: Հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող հայաստանյան երեք խոշոր ընկերությունները թուրք գործընկերների հետ համաձայնեցնում են կապուղիների անմիջական միակցման ծրագիրը: Թուրքական օպերատորն այս ոլորտում դառնում է հայաստանյան շուկայի առաջատար ընկերություններից մեկը:

Միաժամանակ, երկու երկրների քաղաքացիներն ազատ կերպով շարունակում են հատել երկրների սահմանները Վրաստանով կամ օդային ճանապարհով: Անհատական ապահովագրական երաշխիքները շարունակում են գործել՝ հնարավոր դարձնելով զբոսաշրջության բնագավառում համագործակցությունը: Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիները կարող են ապրանքներ և ծառայություններ գնել հարևան երկրում, այդուհանդերձ, նրանց սպառողի իրավունքների պաշտպանության մեխանիզմները մնում են ոչ արդյունավետ: Առանձին դեպքերում հայաստանցիներն ու թուրքահպատակները համատեղ ձեռնարկությունների բաժնետերեր են: Այդուհանդերձ, նման համատեղ ձեռնարկությունների համար քաղաքական ռիսկերը մնում են շոշափելի:

Սցենար 4. Բաց սահման, փակ հնարավորություններ

Տարածաշրջանում նոր ճգնաժամի և ռուս-վրացական մեկամսյա հակամարտության ընթացքում միջազգային հանրության հորդորների և ուժի համաշխարհային կենտրոնների միջնորդությամբ շտապողաբար վավերացվում են հայ-թուրքական արձանագրությունները:

Թուրքիան բացում է ցամաքային սահմանը: Բաց սահմանով Հայաստանը վեց ամիս շարունակ բեռներ է ստանում Թուրքիայից: Այն բանից հետո, երբ վրացական սահմանով կրկին բեռներ են ստացվում, Թուրքիան հայտարարում է, որ մարդասիրական ճգնաժամը հաղթահարվել է և հայ-թուրքական սահմանը պետք է վերագործարկվի Եվրոպական մաքսային միության պահանջներին համապատասխան: Մաքսային սահմանը ժամանակավոր վերակառուցման ընթացքում է, և առայժմ սահմանը հատելու իրավունք ունեն միայն մաքսային կանաչ միջանցքով: Ուղևորափոխադրումների համար սահմանը բաց է, սակայն բեռնափոխադրումները շարունակվում են Վրաստանի տարածքով՝ մինչև վերազնիված մաքսակետերի գործարկումը:

Մինչ այդ, երկրները սկսում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, որը որոշակի ժամանակ է պահանջելու՝ հաշվի առնելով հայ-թուրքական հարաբերությունների բոլոր նրբությունները:

Ձևավորվում են երկու քաղաքական հոսանքներ: Մեկը պահանջում է, որ նախքան բոլոր իրավական հարաբերությունների կարգավորումը սահմանը կարող են հատել բացառապես մաքսային հայտարարագրում չպահանջող ապրանքները: Մյուս հոսանքը էական իրավական խնդիրներ չի տեսնում և շեշտում է, որ երկու երկրների միջև հարաբերությունների հաստատման գործընթացը որևէ կերպ չպետք է տարբերվի այլ երկրների հետ նման հարաբերությունների հաստատման սահուն գործընթացից: Քաղաքական գործիչներից մեկը հայտարարում է. «Արձանագրությունները պարզապես քաղաքական էին, ուղղված «սեփական դեմքը պահելուն» և սահմանը բացելու կամքի ցուցադրմանը: Սահմանը կարելի է բացել առանց որևէ արձանագրության և, փառք երկնավորին, որ այն ի վերջո բացվեց: Պետք է վերջ դնենք քաղաքական շահարկումներին և պարզապես շարժվենք առաջ»:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրները

Համահամայնքային քննարկումներ, Իջևան

24.12.10

Սցենար 1. Բաց սահմաններ՝ քաղաքական նոր լծակներ

Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակումից հետո, որը պաշտոնապես արձանագրվեց որպես «ընդհանուր սահմանի բացում», սկսվեց հայ-թուրքական երկխոսության գործընթացը: Թեպետ այդ երկխոսությունն իրական տեղաշարժեր չբերեց և ընթանում է բավականին լարված միջավայրում, այնուամենայնիվ միջազգային հանրությունն այն կողմից այն ընկալվումէ որպես առաջընթաց և խրախուսվում տարբեր երկրների իշխանությունների կողմից: Հայ-թուրքական հիմնախնդիրների որևէ շահարկում ենթարկվում է խիստ քննադատության՝ որպես հայ-թուրքական հարաբերություններն ու երկխոսությունը խոչընդոտող երևույթ: Նման դիրքորոշում են որդեգրում ոչ միայն միջազգային քաղաքական վերլուծական կենտրոնները և տարբեր պետությունների իշխանությունները, այլ նաև հեղինակավոր միջազգային լրատվամիջոցները:

Հայաստանի ապաշրջափակումը թեպետ տնտեսական հրաշք չբերեց Հայաստանին, այնուամենայնիվ, սահմանամերձ մարզերի տնտեսությունների աշխուժացման պատճառ դարձավ: Տնտեսական հիմնական ազդեցությունը մնում է բեռնափոխադրման ծախսերի կրճատումը, որի արդյունքում թուլանում է Վրաստանի քաղաքական կշիռը՝ Վրաստանը մոնոպոլ միջանցք չէ այլևս:

Սահմանի բացումը բնակչության կենսամակարդակի վրա էական տնտեսական ազդեցություն չի թողնում և, ըստ էության, մեծացնում է միայն գործող տնտեսվարողների հնարավորություններն ու շահույթները:

Այս պայմաններում ապաշրջափակման հիմնական օգուտները մնում են ապագայում մեծ ծրագրերի և ներդրումների հնարավորություններն ու խոստումները: Իսկ այդ ծրագրերի և խոստումների իրականացման հնարավորությունը վերածվում է առևտրի առարկայի կամ դառնում Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական խնդիրները լուծելու գին: Արդյունքում, քաղաքական ցանկացած լուրջ խնդիր լուծելու կամ չլուծելու համար գործի են դրվում նոր ստեղծված տնտեսական լծակները:

Սցենար 2. Նոր ստատուս քվո՝ վերադարձ հնին

Հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների զարգացման արձանագրությունները Հայաստանը չեղյալ է հայտարարում և հետ վերցնում ստորագրությունը՝ պայմանավորելով այս քայլը Թուրքիայի կողմից խոստումների դրժմամբ ու կեղծավոր քաղաքականությամբ: Թուրքիան իր հերթին մեղադրում է Հայաստանին ստորագրությունը հետ վերցնելու և ապակառուցողական քաղաքականություն վարելու մեջ:

Իրավիճակը վերադառնում է հին՝ «նախաարձանագրային» վիճակին, սակայն որոշ տարբերություններով: Մասնավորապես, ընդհանրապես սահմանափակվում են հայկական և թուրքական պետական պաշտոնյաների շփումները, ի չիք են լինում բանակցություններին վերադառնալու հնարավորությունները, այլևս չեն կայանում դիվանագիտական գաղտնի հանդիպումներ: Հայաստանն ու Թուրքիան ընդունում են կոշտ ու միանշանակ դիրքորոշում. Հայաստանը պնդում է սահմաններն առանց նախապայմանների ու վերապահումների բացելու

վրա, իսկ Թուրքիան սահմանների բացում պայմանավորում է Ղարաբաղի հարցում առաջընթացի հետ:

Այս իրավիճակը հնարավորություն է տալիս երկու երկրների իշխանություններին հանգիստ վարել ժողովրդահաճո ներքին քաղաքականություն և կաշկանդված չլինել արտաքին խոստումներով:

Հայ-թուրքական հարաբերությունները մնում են նույն մակարդակի վրա: Երբեմն դրանց բարելավման հույս է ծագում, երբեմն էլ կողմերը ներքաշվում են փոխադարձ քննադատության և մեղադրանքների մեջ:

Հայ-թուրքական սահմանի հարցը դառնում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Եվրամիության արտաքին քաղաքականության բաղադրիչ: Այն ամբողջությամբ պայմանավորվում է այդ երկրների և Թուրքիայի ու Հայաստանի հետ առանձին վերցրած բանակցություններով և դառնում քաղաքական ճնշումների առարկա:

Սցենար 3. Փոքր համաձայնություններ, դանդաղ առաջընթաց

Հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների զարգացման արձանագրությունները Հայաստանը հայտարարում է չեղյալ և հետ է վերցնում ստորագրությունը՝ մեղադրելով Թուրքիային խոստումների չկատարման ու կեղծավոր քաղաքականության մեջ: Թուրքիան իր հերթին մեղադրում է Հայաստանին ստորագրությունը հետ վերցնելու և ապակառուցողական քաղաքականություն վարելու մեջ:

Փոխադարձ մեղադրանքները ստիպում են կողմերին գիտակցել, որ սահմանի բացման փաթեթային տարբերակը չի աշխատում, ու «վեր հանենք բոլոր խնդիրները և լուծենք դրանք քայլ առ քայլ» սկզբունքն իրեն լիովին սպառել է:

ԱՄՆ-ի փորձերը՝ սկսել հայ-թուրքական գաղտնի բանակցություններ, հաջողվում են: Սկսվում է հայ-թուրքական գաղտնի բանակցությունների երկրորդ փուլը: Այս բանակցությունների իմաստը կայանում է քայլ առ քայլ փոխադարձ օգուտների հայտնաբերման, համաձայնեցման և իրագործման մեջ: Սահմանների բացումը մղվում է երկրորդ պլան, ու սկսվում է այնպիսի թեմաների քննարկում, ինչպիսիք են հայ-թուրքական հարաբերություններում առկա բնապահպանական, իրավական, էլեկտրաէներգիայի, ջրային ռեսուրսների, հեռահաղորդակցության, անվտանգության և այլ ոլորտներում համագործակցության հնարավորություններն ու ռիսկերը:

Զուգահեռ մշակվում է նաև արտակարգ իրավիճակներում համագործակցության գաղտնի հուշագիր, ինչը հնարավորություն է ընձեռում պատրաստ լինել կոնկրետ քայլերի՝ վրաց-ռուսական պատերազմի կրկնման դեպքում:

Սցենար 4. Կապերի խզում, նոր հնարավորությունների փնտրտուք

Քաղաքական իրավիճակի կտրուկ շիկացման արդյունքում Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններն ամբողջապես սառեցվում են: Թուրքիան որոշում է Հայաստանի պարագայում շեղվել իր կողմից հայտարարված՝ «զրո խնդիրներ հարևանների հետ» մոտեցումից և դադարեցնում է որևէ համագործակցություն Հայաստանի հետ: Արդյունքում դադարում է համագործակցությունը նաև օդային փոխադրումների ոլորտում: Վրաստանը նույնպես միանում է այս քաղաքականությանը և դադարեցնում Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդությունը:

Այս քայլերն արժանանում են ԵՄ քննադատությանը: Վերջինիս կողմից Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության բանակցություններում նոր նախապայմաններ են առաջ քաշվում՝ վերականգնել ենթակառուցվածքների միջև թեկուզ չնչին, սակայն կայացած գործակցությունը:

Նման իրավիճակը ստիպում է Հայաստանին փոխել քաղաքականությունը և ամբողջ ներուժը ուղղել Հյուսիս-Հարավ քաղաքականության զարգացմանը. Հայաստանն ամբողջապես ինտեգրվում է Իրանի և Վրաստանի ենթակառուցվածքներին:

Քաղաքական նման փոփոխություններն ավելի են կոշտացնում Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականությունները: Վրաստանի և Իրանի քաղաքական կշիռը մեծանում է և նրանք տարածաշրջանում նոր դեր են ստանձնում:

Արդյունքում ձևավորվում է նոր ստատուս քվո Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծով և ԵՄ-Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ենթակառուցվածքային համակարգերով, որոնց միջև Վրաստանն այլևս չի ծառայում որպես հաղորդակցության խաչմերուկ: Այս երկու անկախ ենթակառուցվածքները պարզապես գործում են զուգահեռ և իրարից անկախ, թեպետ հատում են մեկը մյուսին: